



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



«12» 08 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0142-21

Ձեռնարկողը՝

«Արսեսս Քոնսայթ» ՍՊԸ
Ք. Երևան, 2-րդ Աղյուսագործների փող. փուն 48

Գործունեությունը՝

**Լեռնակերպ բնակավայրում 39.8հա տարածքների
անտառապարման ծրագրի շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

Թիվ ԲՓ 0142-21

< 12 > 08 2021թ.

Շիրակի մարզի Լեռնակերտ բնակավայրում 39.8 հա տարածքի անտառապատում ծրագրի նախնական գնահատման հայր

Ձեռնարկող՝	«Աքսես Բոնասայթ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզի Լեռնակերտ համայնք

«Էյ-Թի-Փի» հիմնադրամի կողմից 2021թ. աշնանը նախատեսվում է իրականացնել Շիրակի մարզի Լեռնակերտ բնակավայրերում 39,8 հա տարածքների անտառապատում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 5) կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Համայնքային անտառտնկման համար նախատեսված տարածքը գտնվում է Արագածի արևմտյան լեռնալանջերի ստորոտային մասում, Լեռնակերտ գյուղից մոտ 2կմ դեպի հարավ-արևմուտք: Ընտրված են երկու տարածքներ՝ երեք տեղամասով, որոնցից յուրաքանչյուրում էլ հողային պայմանները բարենպաստ են, քանի որ բնական բուսածածկը բավականին խիտ է և փարթամ:

Բնութագրվող տարածքը գտնվում է չափավոր ցուրտ կլիմայական շրջանում՝ ամբողջ տարին համեմատաբար խոնավ կլիմայով գոտում: Բացարձակ նվազագույն ջերմասիճանը կազմում է -38°C, բացարձակ առավելագույն ջերմասիճանը՝ 34°C: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը կազմում է 500-550մմ, իսկ վեգետացիայի շրջանում 300-350մմ:

Լեռնակերտ գյուղում անտառտնկման համար ընտրված տարածքները ջրաբանական առումով մոտ է գյուղի միջով հոսող համանուն գետակին, որը սնվում է Արագածի հալոցքներից, հանդիսանում է սակավաջուր և սեզոնային: Իսկ բուն անտառտնկման համար ընտրված տարածքում որևէ ջրային համակարգեր չկան: Տնկումը նախատեսվում է կատարել անջրդի պայմաններում:

Լեռնակերտ գյուղում անտառտնկման համար ընտրված տարածքները երկուսն են, երեք տեղամասերով, միմյանց շատ մոտ և նման բնակլիմայական պայմաններով:



«Լեռնակերտ -1» «Լեռնակերտ -2» և «Լեռնակերտ -3» տեղամասերի տարածքում հողը թույլ քարքարոտ է, գենետիկական հորիզոնները թույլ տարանջատված են հումուսային հորիզոններից:

Հայցվող տարածքները գտնվում են ծովի մակարդակից 1850-2000մ բարձրությունների վրա, բուսականության հիմնական տիպերը լեռնային տափաստաններն են և մարգագետնատափաստանները:

Համաձայն հայտի իրականացված դաշտային այցելությունների, ինչպես նաև առկա գրականական տվյալների, անտառտնկման համար նախատեսվող տարածքում և մերձակա տարածքներում պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները բացակայում են:

Մարզում գտնվող «Արփի լիճ» ազգային պարկը և բնության 16 հուշարձանները գտնվում են հայցվող տարածքից բավականին հեռավորության վրա և անտառտնկման աշխատանքների ժամանակ իրենց վրա որևէ ազդեցություն չեն կրելու:

Ընտրված տարածքը թեպետ հանդիսանում է գյուղատնտեսական արոտավայր, բայց հարմար չէ արածեցման համար, համայնքի անասնազվխաքանակի և արոտների քանակի համեմատության արդյունքում կարելի է փաստել, որ համայնքի արոտները լիարժեք բավարարում են առկա գլխաքանակի արածեցման համար:

Համաձայն հայտի անտառպատման համար նախատեսվող տարածքում առկա են Մասրենի առատափուշը, որոնք չեն կազմում մեկ ամբողջական խումբ, այլ զբաղեցնում են լանջերից մեկը, լանջն ի վար տարածված են հատվածներով՝ կազմելով հորիզոնական, իրարից տասնյակ մետրերով հեռավորությամբ տեղադրված փոքր խմբեր:

Նախատեսվող անտառտնկարկների հիմնման համար կատարվել է լանդշաֆտային գոտուն համապատասխան ծառատեսակների ընտրություն: Նախատեսվում է օգտագործել սոճի սովորական, սոճի դրիմյան, կաղնի խոշորառէջ, հացենի սովորական, տանձենի կովկասյան, խնձորենի արևելյան, կեչի լիտվինովի, կեչի ելունդավոր ծառատեսակները, թփերից՝ ազնվամորի, հաղարջենի, թանթրվենի:

Բոլոր տնկիների համար կարևոր նախապայման է հանդիսանում որպեսզի վերգետնյա և ստորգետնյա մասերը լինեն նորմալ համամասնության մեջ, լավ զարգացած և ամբողջական արմատային համակարգով: Համաձայն հայտի տնկարկներում ասեղնատերևը տնկվելու է իրար հաջորդող երկու ամբողջական մաքուր շարքերով, այդպիսով՝ այն հանդես է գալու, որպես գլխավոր տեսակներից մեկը: Լայնատերև տեսակներից կաղնին նույնպես տնկվելու է իրար հաջորդող երկու ամբողջական մաքուր շարքերով, որը նույնպես հանդես է գալու որպես գլխավոր տեսակ: Մնացած լայնատերև ծառատեսակները, հանդիսանում են որպես ուղեկցող տեսակներ և նախատեսված են տնկել մեկական շարքերով: Իսկ թփատեսակները խառը կազմով կեզրավորեն տնկարկն ամբողջությամբ: Ընդհանուր առմամբ, տնկարկի համար նախատեսված է խառը տեսակային կազմ, էկոլոգիական կայունության նկատառումներից ելնելով:

Համաձայն հայտի տնկումները նախատեսված է իրականացնել 3մ միջարքային և 1մ միջբույսային սխեմայով: Սակայն կախված տարածքում առկա բնական խոչընդոտներից, որոշ հատվածներում տնկումներ հնարավոր չէ իրականացնել, այդ իսկ պատճառով տնկարկում նախատեսված է ընդհանուր առմամբ 119400 հատ տնկանյութ, որը հեկտարի հաշվով կազմում է 3000 հատ սերմնաբուսակ և տնկի: Տնկարկում ծառերի խտությունը կախված է անտառտնկման նպատակից, այս դեպքում տնկման համար նախատեսված է միջբուսային հեռավորությունը 1մ, միջշարայինը 3մ:

Տնկումները նախատեսված է իրականացնել բույսերի վեգետացիոն դադարի փուլում: Տնկանյութի (բաց արմատային համակարգով աճեցված) տեղափոխումը տնկարկին



մինչև տնկատեղ նախատեսված է իրականացնել հողատորֆային ջրային լուծույթով պատրաստված դույլերով: Աշնան տնկումների համար նախատեսված տնկանյութի մի մասը (մասնավորապես սոճին ամբողջությամբ) աճեցված է փակ արմատային համակարգով:

Անտառապատման համար ընտրված են այն տարածքները, որտեղ առկա է բնական խոնավություն: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ անտառտնկարկի համար ոռոգում չի նախատեսվում իրականացնել: Անտառհիմնման ծրագրված աշխատանքների մեջ են մտնում նաև խնամքի աշխատանքները, որոնք նախատեսվում է իրականացնել մինչև ծառուտի և սաղարթի միակցումը, ինչը կհամապատասխանի անտառի շարք անցկացնելուն: Այս աշխատանքները ընդգրկում են խոտհունձ, քաղհան, փխրեցում, սանիտարական վիճակի հսկողություն:

Համաձայն հայտի անտառտնկարկներում նախատեսված է նաև տնկման զուգահեռ կատարել մուլչապատում, որը նպատակ ունի կանխելու ոչ միայն ջրի անարդյունավետ գոլորշիացումը, այլև տնկիների շրջակայքի մոլախոտապատումը: Դրա համար օգտագործվելու են տարբեր նյութեր՝ ծառերի ճյուղերի և կոշտ ցողունների մանրացված տաշեղ-կտորտանք, խոշոր թեփ, առանձին դեպքում՝ մանր քարեր (քամահար լանջերին):

Համաձայն հայտի շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր վնասակար ազդեցությունների մեղմացման և կանխարգելման նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

- Կարմիրգրքային և էնդեմիկ տեսակների նոր աճելավայրերի տարածքների փնտրում և այդ տարածքների վրա ուղղակի ազդեցությունների կրճատում:

- Աշխատանքները իրականացնել ապահովելով հողային ռեսուրսների, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների պաշտպանությունը:

- Նավթամթերքների անհրաժեշտ քանակի պահեստավորում անթափանց տակառներով, աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի թափքում: Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են անտառվերականգնման տարածքից հեռու, բեռնատար մեքենաների սեփականատերի սեփական տարածքներում:

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց պոլիէթիլենային տոպրակների մեջ (մինչև 35լ տարողությամբ):

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:

- Սննդային կամ դեղագործական նպատակներով բուսատեսակների հավաքի արգելում և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ամփոփելով կարելի է եզրահանգել, որ նախագծի իրականացման արդյունքում անտառածածկ տարածքների հիմնումը շրջակա միջավայրի վրա կունենա դրական ազդեցություն՝ ինչպես բնապահպանական, այնպես էլ սանիտարահիգիենիկ տեսանկյունից: Շիրակի մարզն անտառապատվածության առումով առավել խոցելիներից է, որտեղ բնական անտառները ծայրաստիճան սակավ են: Այս ենթատեքստում Արագածի լանջերին, Լեռնակերտ համայնքի վարչական տարածքում՝ դեպի Սառնաղբյուր ուղղությամբ նախատեսված անտառտնկման աշխատանքների կատարումն այդ պակասը լրացնելու հնարավորություն է: Հիմնադրվելիք անտառային զանգվածները կլիմայակարգավորիչ դերից բացի, այդ տարածքից դեպի արևմուտք



տարածվող մշակովի հողերի հակաէրոզային պաշտպանության գործում մեծ նշանակություն կունենան:

Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Շիրակի մարզպետարանը: Հայտը լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Լեռնակերտ համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջ

Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Աքսեսս Քոնսալթ» ՍՊԸ կողմից ներկայացված Շիրակի մարզի Լեռնակերտ բնակավայրում 39.8 հա տարածքի անտառապատում ծրագրի նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ՝



Ա. Վարդանյան